ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի 2011 թվականի ամփոփ հաշվետվություն

2011 թվականի ընթացքում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն իր գործունեությունն իրականացրել է հետեւյալ հիմնական ուղղություններով՝

1. Օրենսդրական դաշտի կատարելագործում՝

1.1 Մշակվել են ՀՀ կառավարության որոշումներ.

- «Հասարակական գիտությունների զարգացմանը նպաստող ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 18-ի N 10 արձանագրային որոշում,
- «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը եւ միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի N 23 արձանագրային որոշում,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի N 861-Ն որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի N 1406-Ն որոշում,
- 1.2 Մշակվել են նաեւ ՀՀ կառավարության որոշումների նախագծեր՝
- «Գիտական եւ գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ,
- «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ), նպատակային-ծրագրային ֆինանսավորման, գիտական փորձաքննության եւ գիտական փորձաքննություն իրականացնող փորձագետների համակարգի ձեւավորման, գիտական ծրագրերի եւ թեմաների հայտերի երաշխավորման ու հաշվետվությունների ընդունման հանձնաժողովի ձեւավորման եւ աշխատանքի կազմակերպման կարգերը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի NN 1121, 1122 եւ 1123 որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ,

- «Հետազոտական համալսարանի պիլոտային ծրագրին եւ ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ,
- ««Ռազմաբժշկական գիտակրթական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ,
- «Հայագիտության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության հայագիտության ոլորտի զարգացման 2011-2025 թվականների ռազմավարությանը եւ ռազմավարության իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշումների նախագծեր,
- «Հայաստանի Հանրապետությունում փոքր եւ միջին քիմիայի զարգացման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 1555-Ն որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ,
- ««ՔԵՆԴԼ» արագացուցչային հետազոտությունների ինստիտուտ» պետական ոչ առեւտրային կազմակերպություն ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ,
- «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հիդրոմեխանիկայի եւ վիբրոտեխնիկայի բաժին» փակ բաժնետիրական ընկերությանը «Էներգոտեխնիկա-Ա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը միացման ձեւով վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ,
- «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թվականի ապրիլի 16-ի ՆՀ-97-Ն հրամանագրի մեջ փոփոխություն կատարելու մասին» հրամանագրի նախագիծ:

2. Գիտական գործունեության կազմակերպում.

2.1 Ամփոփվել են՝

- 2010 թվականի հոկտեմբերի 20-ին հայտարարված գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի արդյունքները: Մրցույթի արդյունքում ֆինանսավորվեցին 130 գիտական ծրագրեր:
- 2010 թվականի նոյեմբերի 23-ին հայտարարված «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2010» մրցույթի արդյունքները. ֆինանսավորվել են 32 գիտական ծրագրեր:

2.2 Հայտարարվել եւ անկացվել են՝

- «Արցախի գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2011» մրցույթը. ֆինանսավորման երաշխավորվեց 5 գիտական ծրագիր,
- Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի հետ համատեղ գիտական հետազոտությունների ծրագրերի աջակցության համատեղ մրցույթը. ֆինանսավորվեցին 17 գիտական ծրագրեր,
- կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների նախագծերի հայտերի ընդունումը. ֆինանսավորման երաշխավորվել են 17-ը,
- Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի հետ համաֆինանսավորման սկզբունքով անցկացվող գիտական ծրագրերի համատեղ մրցույթ. արդյունքները կամփոփվեն 2012 թվականի հունվարին,
- Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի հետ համատեղ գիտական հետազոտությունների ոլորտում երկկողմ փոխգործակցության ծրագրի բաց մրցույթը. արդյունքները կամփոփվեն 2012 թվականի հունվարին:

Վերը նշված բոլոր մրցույթների համար կազմակերպվել է ներկայացված 638 հայտերի գիտական փորձաքննություն:

2.3 Կազմակերպվել է 2008-2010 թթ. գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացված թվով 705 գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվությունների գիտական փորձաքննությունը, ամփոփվել են արդյունքները:

2.6 Լրամշակվել է «ՀՀ գիտական կազմակերպության անձնագիր» ձեւաթուղթը:

2.7 Իրականացվել է գիտական կազմակերպությունների աշխատակիցների տվյալների շտեմարանի, ինչպես նաեւ օտարերկրյա պետություններում բնակվող հայազգի գիտնականների տվյալների էլեկտրոնային շտեմարանի լրամշակման եւ թարմացման աշխատանքները:

2.8 Ընդհանուր առմամբ 2011 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ ֆինանսավորվել է 57 գիտական գործուղում, 33 գիտաժողով:

3. Գիտական եւ գիտատեխնիկական համագործակցություն.

2011 թվականի ընթացքում միջազգային համագործակցության շրջանակներում կնքվել են.

- ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի եւ Պաուլ Շերերի ինստիտուտի (PSI) միջեւ մտադրությունների հուշագիր,
- ՀՀ կրթության եւ գիտության նախարարության եւ Գերմանիայի կրթության եւ հետազոտությունների դաշնային նախարարության միջեւ գիտության եւ տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության զարգացման մասին մտադրությունների հուշագիր,
- ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի եւ ԴԵՋԻ կենտրոնի միջեւ մտադրությունների հուշագիր,
- ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի եւ «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի միջեւ մտադրությունների հուշագիր,
- ՀՀ կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի եւ Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի միջեւ համագործակցության մասին համաձայնագիր: